

ԵՐԵՎԱՆԻ ՏԱՐԻ

ՄԵԼԻ

Տարեկան գինը 10 ռուբլի. կէս տարվանը 6 ռուբ. Առանձին համարները 5 կոպեկով.

Թիֆլիսում գրվում են միմյանիս խմբագրատան մէջ.

Մեր հասցեն. Тифлисъ, Редакция «Мпакъ».
Համ. Tiflis, Rédaction «Mschak».
Տէլէֆոն № 253.

Խմբագրութիւնը բաց է առաւօտեան 10—2 ժամ (բացի կիրակի եւ ասոն օրերէն).

Յայտարարութիւնը ընդունվում է ամեն լիզուով.

Յայտարարութիւնների համար վճարում են իւրաքանչիւր տողատեղին 10 կոպեկ.
Տէլէֆոն № 253.

ՀԻՄՆԱԳԻՐ ԳՐԻԳՈՐ ԱՐԾՐՈՒՆԻ

ԲՈՒՆԵՆԴԱՅԻՆՔԻՆ

Ընթերցասիրութեան պահանջ.— ԵՆՐԻՔԻՆ ՏԵ-
ՍՈՒԹԻՆ. Թատրոնական խնդրի շուրջը. Են-
թեր. — ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՆ. Տպա-
րութիւններ Նիւ-Եօրկէն. Արաքսի լուսեր.—
Ընթերցասիրութիւնը. — ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՆՆԵՐ. —
ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ. Եւրոպական մտքից եւ գրա-
կանութիւնից.

ԸՆԹԵՐԾԱՍԻՐՈՒԹԵԱՆ ՊԱՆԴԱՆԶ

Մեր միշտ մի առանձին հետաքրքրու-
թեամբ ենք վերաբերվել դէպի այն փորձե-
րը, որոնք նպատակ ունեն տարածել ըն-
թերցասիրութիւնը ժողովրդի մէջ: Մեր
հաւատում ենք, որ ընթերցասիրութեան
զարգացումը էական օգուտներ կը տայ մեր
ժողովրդին, ծանօթացնելով նրան այն բա-
ղրի հետ, ինչ որ կարող է նպաստել նրա
նիւթական և հոգեկան կեանքի բարւո-
րմանը և կապ հաստատելով նրա և ինտե-
լիգենտ խաւերի մէջ:

Նոյն իսկ մեր երկրի կեանքի աղքատիկ
փորձառութիւնից մենք բաւական փաս-
տեր ունենք ապացուցանելու, որ ընթեր-
ցասիրութեամբ պարագլուղ գիւղերը ա-
ւելի բաւարար վիճակ ունեն, քան նրանց
հարեան գիւղերը, որոնք գտնվում են նոյն
պայմանների մէջ: Այդպիսի գիւղերում
համայնական հասարակութիւնը աւելի
պահանջող է դէպի իր պաշտօնեաները
և գործողները, գիտէ հաշիւ առնել, քնն-
նադատել գործերը և աւելի լաւ գործա-
կառութեան ծրագիրներ մշակել: Այդպիսի
գիւղերում փորձեր են արված ձեռք բե-
րելու նոր գործիքներ, մշակելու հողը և
աւելի կատարելաւ եղանակով և սկիզբ դնել
կրթական և ուրիշ հիմնարկութիւնների:

Սակայն ընթերցասիրութեան զարգաց-
ման համար կատարված փորձերը դեռ
թոյլ են և սակաւադէպ: Միայն մի քանի
գիւղեր են կարողացել փորձ ի շատէ գործ-
քցել տալ այդ սպասելիքով: Ընդհանրու-
թիւնը դեռ բոլորովին գուրկ է տպագրա-

կան խօսքի մուտքից դէպի գիւղական
խորքերը:

Գրագրարաններ հեշտ է հիմնել այնտեղ,
ուր կան զարգացել: Այդպիսի գրագրարան-
ները աւելի յարմարեցրած են լինում ման-
կավարժական պահանջներին և աչքի ա-
ռաջ են ունենում միայն զարգացող ուսու-
ցիչներին և աշակերտներին: Սակայն այդ-
պիսի գրագրարաններից կարողանում են
որոշ դէպքերում օգտվել և գիւղի ինտե-
լիգենտ մարդիկ: Մի քանի գիւղերում
փորձել են ընթերցասիրութեան զարգաց-
ման համար կազմակերպել փոքրիկ խմբեր,
որոնց մասնակիցները պայմանաւորվում են
գրքեր և լրագրերի բերել տալ հաւաքա-
կան միջոցներով: Մի հինգ, տասն հոգի
միանում են իրանց անդամավճարներով,
տալով, օրինակ, տասնական ռուբլի, որով
գոյանում է դիցուք մի 50—100 ռուբլի:
Ահա այդ գումարով նրանք բերել են տա-
լիս պարբերական թերթեր և նոր լրա-
տետնող գրքեր: Այնտեղ, ուր դժուար է
նոյն իսկ այդպիսի խմբեր կազմել, ըն-
թերցասիրութեան նշանակութիւնը հաս-
կացող անձինք, օրինակ գիւղի ուսուցիչը,
բաժանան կամ գրագետ խանութպանը
փորձում են իրանց ունեցած գրքերը և
թերթերը կարգաւ գիւղական հետաքրք-
րողների փոքրիկ շրջանակներում և այդ-
պիսով ընտելացնել նրանց ընթերցասիրու-
թեան գործին:

Կրկնում ենք, որ դեռ շատ քիչ գործ է
կատարված այդ առաքելիքում: Բայց յայտ-
նի են մի քանի միջոցարկան փորձեր մեր
երկրի գիւղական տեղերում: Մանկալի է,
որ ընթերցասիրութեան համար կազմվող
խմբերը ուշը դարձնէին գիւղական կա-
րիքներին վերաբերեալ գրքերի վրա և
նպաստէին գիւղացուն բարւոքելու թէ իր
տնտեսութիւնը և թէ իր կենցաղավա-
րութիւնը:

ՆԵՐԳԻՆ ՏԵՍՈՒԹԻՆ

ԹԱՏՐՈՆԱԿԱՆ ԽՆԴԻՐԻ ՇՈՒՐՁԸ

I
Եթէ դիտենք մեր թատրոնական գործու-
նէութիւնը, կը տեսնենք, որ այդ գործունէու-
թիւնը գաւառներում, ուր առաջ նա այնքան
ծաղկած վիճակի մէջ էր, այժմ թուլացել է:
Եւ պարզ է. առաջ ինտելիգենցիայի մեծ կօն-
տրիքն էր այնտեղ, որը եւ գլուխ էր կանգ-
նում ժողովրդական այդպիսի բաւականութիւն-
ների: Ընդհակառակը, մեր կենտրոնական քա-
ղաքներում թատրոնական գործը աւելի ծաղ-
կած է, քան տալիս, կից էլ յիշենք Արամիանի
կարճատեւ եւ փայլուն շրջանը: Պատճառը նոյն-
պէս պարզ է. գաւառական ինտելիգենցիան
կենտրոնացած է այժմ մեծ քաղաքներում:
Թիֆլիսը եւ Բաքուն վերջին ժամանակները մի-
մեանից յետ չեն մնում դափնիներ վաստակե-
լու մէջ, իսկ այս տարի արդէն Թիֆլիսում
գործում է կանոնաւոր կերպով հաստատված
եւ կազմակերպված ընկերութիւնը, որին միայն
աղոյրութիւն եւ յարատեւութիւն կարող ենք
ցանկալի:

Քանզի է եւ Բաքուն: Մինչդեռ Թիֆլիսում
միայն խօսվում էր ընկերութեան գործունէու-
թեան մասին, Բաքուն սուս ու փուս իր գործն
էր տեսնում: Թիֆլիս Սիբիրայի արդէն Բաքուն
բաժին է պ. Պետրոսեանի հետ, կարծես եւ
օրիորդներ Ֆելեկեաններից մէկը, նոյնպէս եւ
միւս դերասանների մեծ մասը: Ասենք վերջին
տարիների թատրոնական գործունէութիւնը ե-
րեւան հանց մի շարք բեմական նոր գործիչ-
ներ, որոնք հնկու հետ միասին բաւականու-
թիւն կը տան երկու տեղին էլ: Բազում լուրջ
ուշը են դարձնում նաեւ բեմական փրա,
որը իւրաքանչիւր թատրոնական գործունէու-
թեան առաջին աղոյրութիւնն է: Եթէ մի ա-
ռանձին հոգատարութեամբ էլ լեզուի վրա ուշը
դարձնէին, այն ժամանակ աւելի կատարեալ կը
լինէր գործը:

II

Ժողովրդական ներկայացումներն էլ ընթանում

Առաջին իր սկզբնական ծագումն ստացաւ
Յորտիայում, որին եւ ապագայում առանձին
զարկ տուեց իտալացի նշանավոր ոճագէտ-
ներեմ Պալլիսի եւ այժմ Տուրինի համալսա-
րանի պրոֆէսոր Ժ. Գալարէ Լ. Եւրոպայի
երկրորդ ուղղութիւնը, որի յայտնի ներկայա-
ցուցիչն է գերմանացի հոգաւոր իրաւաբան
Յորանց ֆօն Լիւստը, ինչպէս շուտով կը
տեսնենք, բնական հետեւանքն էր առաջինի եւ
նրա պակասուած կողմերը լրացնող մի անհրա-
ժեշտութիւն:

Լամբրոզոյի հայեացքների կամ ոճագործա-
կան մարդաբանութեան գլխաւոր էութիւնն
այն է թէ՛ ոճագործութիւնը միայն անհատի
ընտանական եւ անատմական առանձնաշա-
կութիւններով պէտք է բացատրել, ոճի ար-
հատը յանցաւորի ֆիզիքական եւ հոգեկան ան-
հատականութիւնն է: Եթէ պէտք է որոնել Ոճա-
գործը ծնվում է, ի բնէ արամադիւր է դէպի
յանցանքը:

Ոճագործական մարդաբանութիւնը ոճագ-
գործին, այսպէս ասած, անհատականացնում է.
ոչ միայն յանցանքը, ոճին է ուսումնասիրում,
այլ եւ ոճագործին ըստից: Լամբրոզոյի
կարծիքով՝ մարդաբանական տեսակետից՝ գոյու-
թիւն ունի մինչեւ իսկ ժամանակակիցութեան
վրա հիմնված ոճագործական մի տիպ, որ նա
անուանում է զբոսայի ոճագործ: Այս տիպը
նա գտել է բազմալուրման հետազոտութեամբ:
Նա ուսումնասիրել է հարիւրաւոր ոճագործ-
ների գանգը, ուղեղը եւ ուրիշ հազարաւորնե-
րի մարմնի արտաքին զանազան մասերն ու ե-
րեւոյթները եւ նկատել է արանց մէջ մի որոշ
առանձնաշաղկապութիւն: Ահա այս մասնակի եւ
բնորոշ նշաններից նա հետեւեցրել է իր ոճագ-
գործական տիպը Յայտարարելով ոճագործու-
թիւնը իրեն ժամանակակից, հիւանդոտ, ախ-

են իրանց չաւորով: Այստեղ ահա մենք
ասելիք ունենք: Բազուի թատրոնական վերջին
տարիների գործունէութիւնը պարզ ցոյց տը-
ւեց, որ այդ կերպով թատրոնի գոյութիւնը
երկար ժամանակով ապահովել անհնարին է.

դա միայն արհեստական գոյութիւն է, որը
կենդանացի այս կամ այն անհատի լինել կամ
չլը լինելով եւ, վերջապէս, տարեկան ահագին
շահք գործ դնելը եւ մի 5—6,000 ռուբլի էլ
դեֆիցիտ ունենալը ոչ մի դէպքում ցանկալի
բան չէ: Տարիների ընթացքում մի աւելորդ
անգամ էլ ապացուցվեց, որ մեր բուրժուա-
զիայի յոյսով թատրոն պահել չէ կարելի, ի-
մացվեց, թէ մեր թատրոնական հասարակու-
թիւնը միջին եւ ցածր դասակարգն է, որի հա-
մար թատրոնը մշտական դարձնելու միակ մի-
ջոցը՝ նրա մուտքը էժանացնելն է: Նոյն այդ
հասարակութիւնն էր, որ լցնում էր ժողովր-
դական թատրոնի դահլիճը ամեն անգամ: Պատ-
ճառը՝ գնորդ թատրոնի էժանութիւնը: Այնտեղ գալիս
էին նրանք, որոնք մի ռուբլի էլ կը տային
տոմսակին, թէեւ այնտեղ ամենաբարձր գինը
50 կ. էր: Բայց այստեղ մի ուրիշ խնդիր է
ծագում. ժողովրդական ներկայացումներին
մասնակցում է ուրախութեամբ իւրաքանչիւր
ձեռնհաս անձն, ի նկատի ունենալով, որ զը-
րանք բանուր, արհեստաւոր դասակարգի հա-
մար են: Որքան հաճելի կը լինի նրանց համար,
իսկապէս որքան էլ ցանկալի է, որ նրանք շա-
րունակ ձրիապէս բեմ դուրս գան, մասնաւոր
գործը կանոնաւորելուց յետոյ աւելի յաճախ,
մի հասարակութեան համար, որը կարող է եւ
հնարաւորութիւն ունի ոչ միայն 5—50 կոպ.
վճարել, այլ եւ 50 կոպէկէն մինչեւ 1 ռ. 50
կոպ., իսկ այդ ժամանակ մի ուրիշ թատրո-
նում վարձու դերասանները մի խումբ ազգա-
սիրաբար թատրոն յաճախողների համար մի
ուրիշ ներկայացում տան: Դա անարդարութիւն
է եւ խոչոր անարդարութիւն, որը կարելի է
տանել միմիայն ժամանակաւորապէս, բայց ոչ
մշտապէս:

III

Ի՞նչ է մնում անել ուրեմն. մի ա ց ն է ի
երկու թատրոնն էլ: Եւ իսկապէս մենք

տարանական շարժանքների հետ կապված մի
երեւոյթ՝ նա ահագին ծառայութիւն մատու-
ցեց իր աւաւանակաւ հոգեբանու-
թեանը, որ այժմ նոյնպէս երկու ուղղու-
թեան է բաժանված—մարդաբանական եւ մար-
դաբանա-սօցիոլոգիական:

Լամբրոզոյի իր վերոյիշեալ հետազոտութիւն-
ներով մի ուրիշ նշանաւոր եղբայրացութեան էլ
հասաւ: Եթէ ոճագործութիւնը հիւանդոտ,
ժամանակակից մի երեւոյթ է—այն ժամանակ
խախտվում է կամբի ազատութեան սկզբունքը
կամ ուրիշ խօսքով՝ փոխվում է յանցանքի բը-
նաւորութիւնը եւ ոճագործի պատասխանա-
ւորութեան չափը նսեմանում է, հետեւաբար
եւ պատժական օրէնսդրութիւնը պէտք է
հիմնովին կերպարոտփոխվի:

Այս նշանաւոր խնդրին մենք դեռ առիթ
կունենանք վերադառնալու իսկ առ այժմ անց-
նենք ոճագործական երկրորդ ուղղութիւնը եւ
Լամբրոզոյի վարդապետութեան միակողմանիու-
թիւններին:

Ոճագործական մարդաբանութեան կողմնա-
կիցները գլխաւոր յուշադրութիւնը դարձնում
էին անհատական վրա՝ ոճագործի քնածին եւ
ժամանակակից յատկութիւններն էին միայն ի
նկատի առնում: Իսկ անհատականից դուրս՝
հասարակական հանգամանքները մոռացութեան
էին տալիս: Հետեւաբար բնական կերպով՝ ե-
րեւան պէտք է դար մի հակադրութ ուղղու-
թիւն, որ ոճագործութիւնն զիտական հետա-
զոտութիւնը կապէր հասարակական կեանքի եւ
սօցիալական պայմանների հետ: Սա ոճագի-
տական սօցիոլոգիան է: Այս ուղղութեան
"ուշ ներկայացուցիչները սակայն չեն հե-
ղում անհատական մոմէնտը, այլ կամ առաք-
ւում են թէ՛ այս վերջինն էլ սօցիալականովն
է պայմանաւորվում կամ թէ՛, անկախ այս

ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

ԵՐԵՎԱՆԻ ՄՏՔԻՑ ԵՒ ԳՐԱԿԱՆՈՒԹԻՒՆԻԾ

I

Փոփոխութիւն, զարգացում, առաջադիմու-
թիւն ինչպէս կեանքի, այնպէս էլ գիտու-
թիւնների յատկանիշն է—գուցէ միայն այն
առարկութեամբ, որ գիտութիւնների մի քա-
նի ճիւղերում էլ վիճակներ երեւնի աւելի յա-
մառաջ, քան թէ կենդանի կեանքում: Բացի
այս զուգահեռաբանից, որ մենք անց ենք կաց-
նում գիտութեան եւ կեանքի մէջ, թող պա-
րտաբար չը թուի, եթէ աւելի առաջ գնանք եւ
նկատենք, որ ինչպէս կեանքի՝ այնպէս էլ գի-
տութեան մէջ նկատելի է պահպանողական
նութիւն:

Այս զանազադարձ եւ պահպանողական ոգին
գիտութիւններից աչքի է ընկնում, ի միջի այ-
լոց իրաւաբանութեան—գնի իրաւաբանու-
թեան մի քանի հիմնական ճիւղերի—մէջ: Վե-
րաբար ընդհանրացումների, կաղապարված,
չափված յօդուածներով ի կօդէքանների, ստան-
ժրտալուծ ձեւակաւութիւնների մի հսկայա-
կան ժողովածու—ահա մինչեւ անցնալ դարի
առաջին քառորդը իրաւագիտութեան ընդհա-
նոր պատկերը: Նշանաւոր իրաւաբան Սալին-
ին եւ իր զարդը այս ստին, անկենդան կաղ-
մին մի լայնի շարժանութիւն, ոգի ներշնչե-
ցին Այս մեծ իրաւաբանի մնացուն նշանակու-
թիւնը նրանում է կայանում, որ նա իրաւա-
գիտութեան մէջ մտքից պատմական հա-
յեացքը եւ իրաւունքը յայտարարեց իրեն
հասարակական—ժողովրդական ֆակտորների մի
ծնունդ:

Սալինյի ստեղծած զարգաց, որ զանազան
տեղերում մինչեւ այժմ դեռ տիրապետում է,
իր զօգաւորական եւ միակողմանի մասնա-
րում ունեցաւ անշուշտ իր խոչոր հակառա-
կորդներ, որոնցից ամենահոգաւորը Բուզով
ֆօն Երինգն է: Այս հանձարեղ իրաւաբանին սա-
կայն վիճակված չէր կատարել այն յեղափոխիչ
գերը, որի վարիչները մասամբ իր աշակերտ-
ներն էին լինելու: Սրա պատճառը բացի ար-
տաքին հանգամանքներից՝ պէտք է փնտռել
մասամբ նաեւ Երինգի աշխարհայեացքի եւ
ընդհանուր մտածողութեան առանձնաշաղկա-
թեան մէջ—նա այսպէս թէ այնպէս հակված
էր դէպի վերացականութիւնը:

Բայց կարճ ժամանակից յետոյ կեանքի պա-
հանջները, ինչպէս եւ բնագիտական ու հասա-
րակական գիտութիւնները իրանց զօրեղ ազդե-
ցութեամբ պէտք է մուտք գործէին եւ իրա-
ւագիտութեան սահմանը: Վերացական մէթօդը
տեղի պիտի տար փորձականին, անհիմն դե-
զուկցիան՝ առողջ ինդուկցիային:

Եւ ճիշդ, իրաւաբանական գիտութիւնների
մէջ վերջին տասնամեակներում նկատելի է մի
արտակարգ հոսանք, որ լինելով իրեն նորա-
ծին մի ճիւղ, թէեւ դեռ այնքան ուժեղ չէ,
գործնական լայն նշանակութիւն դեռ չէ ստա-
ցել—այնուամենայնիւ անկասկած է, որ դրան
վիճակված է յեղաշրջող եւ արմատական մի
դեր խաղալ իրաւաբանական ընդհանուր գի-
տութեան մէջ: Մեր խօսքը վերաբերում է ոճ-
ագիտութեան (Krimonologie):

Նորագոյն իրաւաբանութեան մէջ գոյութիւն
ունեն ոճագիտական երկու յայտնի ուղղու-
թիւններ—I. ոճագործական մարդա-
բանութիւն (Kriminalanthropologie) եւ II
ոճագործական սօցիոլոգիա (Krimi-
nalsociologie):

